

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ _____ / Լ.Հովհաննիսյան/

«31» օգոստոս 2023 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևանի Վիլյամ Սարոյանի անվան թիվ 138 հիմն.դպրոց

Iբ

Տոնոյան Շողիկ

դասղեկի ազգանունը, անունը

2023-2024 *ուստարի*

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) -

2023-2024 ուսումնական տարին 1բ դասարանը սկսեց 19 աշակերտով, որից 6-ը աղջիկներ են, իսկ 13-ը՝ տղաներ: Կա մեծ պատասխանատվություն և վերահսկողություն, որ աշակերտները լինեն պարտաճանաչ, պատասխանատու և դաստիարակվեն որպես լավ քաղաքացի: Դասարանում կան նաև թույլ կարողություններ ունեցող երեխաներ, որոնց հետ տարվում է լրացուցիչ աշխատանքներ:

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում - Ուսումնադաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին, որպեսզի շտկվեն այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն): Զարգացնել երեխաների տրամաբանական կարողությունները, հմտությունները: Դասերը անցկացնել աշակերտակենտրոն ուսուցմամբ, որի շնորհիվ կզարգանա նաև բազմաբնույթ մտածողությունը, աշակերտները ձեռք կբերեն ինքնուրույն աշխատելու, մտածելու կարողություններ: Ուսումնական տարվա ընթացքում կայցելեն թանգարաններ, տարբեր տեսարժան վայրեր, կանցկացվեն տարաբնույթ էլեկտրոնային դասեր, որոնք իրենց մեջ կունենան և՛ ուսումնական, և՛ դաստիարակչական բնույթ:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն – Դասարանում ստեղծել լավ մթնոլորտ: Սովորեցնել հարգել միմյանց, լինել ազնիվ, ճշտախոս, պատասխանատու, միշտ պատրաստ օգնելու ընկերոջը : Հայեցի դաստիարակության համար մեծ դեր ունի տվյալ երկրի պատմությունն ու մշակույթը: Երեխաներին պետք է հաղորդակից դարձնել իր ժողովրդի անցյալին, մշակութային ժառանգությանը և մերօրյա կատարվող իրադարձություններին: Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ:
-

3.2 Գեղագիտական դաստիարակություն - Երեխաների մոտ գեղագիտական ճաշակը զարգացնելու նպատակով, սովորեցնել գտնել ու տեսնել գեղեցիկը: Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել, թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Պետք է աշակերտներին հնարավորություն տալ ազատ մտածել, ստեղծագործել, գեղանկարչական հմտություններ ձեռք բերել: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ: Հաճախակի պետք է այցելել մանկական պատկերասրահներ, թանգարաններ, տեսնել հասակակիցների ստեղծագործությունները: Ճանաչել, հասկանալ և գնահատել ազգայինը:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն –Հաճախակի կազմակերպել զրույց-քննարկումներ հայրենասիրական թեմաներով: Սերը դեպի հայրենիքը՝ քաղաքակիրթ մարդու առաջին արժանիքն է: Ոչ թե խոսքերով, այլ գործով պետք է ցույց տաս քո հայրենասիրությունը: Բոլորը պետք է դասեր քաղեն 44-օրյա պատերազմից և ճիշտ հասկանան թե ի՞նչ է հայրենիքը: Ստով հայրենիք չես փրկի: Պետք է հնարավորինս լավ զինվել, կազմակերպել տարաբնույթ քննարկումներ: Ներկայացնել ներկայիս հերոսներին և նրանց քաջագործություններին:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն - Հետևել աշակերտների հիգիենային, շարժումներին, ճիշտ նստելու,գրատախտակից համապատասխան հեռավորությունից օգտվելու և նմանատիպ հարցերին: Դասերին ծանրաբեռնվածությունը թոթափելու, մկանային լարվածությունը թուլացնելու նպատակով կազմակերպել ֆիզիկական վարժություններ: Հետևել աշակերտների մասնակցությանը ֆիզկուլտուրայի դասերին: Ֆիզիկական դաստիարակությունը կրթության անբաժանելի մասն է և նպատակաուղղված է անձի բազմակողմանի, ներդաշնակ զարգացմանը, շարժողական ունակությունների և հմտությունների մշակմանը, կենցաղում առողջ ապրելակերպի արմատավորմանը: Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն: Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով: Կազմակերպել տարբեր միջոցառումներ:

3.5 Աշխատանքային դաստիարակություն – Դասարանում պահպանել մաքրություն, կարողանալ գնահատել իր և ընկերոջ կատարած աշխատանքը, պահպանել գույքը: Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում: Երեխաները պարտավոր են իրենց տարիքին համապատասխան աշխատանքներ կատարեն տանը, դպրոցում: Մասնակցելով տարաբնույթ աշխատանքների, ձեռք կբերեն նոր կարողություններ և հմտություններ:

3.6 Բնապահպանական դաստիարակություն -Բնությունը հրաշք է իր բնական երևույթներով:Անհրաժեշտ է օգնել աշակերտներին՝ տեսնել, հասկանալ և գնահատել այն: Բնությունից մարդը շատ բան է վերցնում, բայց պետք է այն պահպանել և ուշադիր լինել: Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է: Բնության հետ շփումը նպաստում է բարոյական, դրական որակների ձևավորմանը:

4. Դպրոց-ընտանիք կապը – Ապահովել դպրոց-ընտանիք կապը: Ոչ մի հակասություն չի կարող լինել դպրոցի և ընտանիքի միջև,եթե ծնողներն ու դպրոցը համագործակցում են, ինչը աշակերտի կրթության վճռորոշ տարրն է: Ծնողները պետք է ընդգրկվեն իրենց երեխաների կրթության գործին, մասնակցեն դպրոցում կազմակերպվող միջոցառումներին, սեմինարներին: Երեխաները պետք է

հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսզի աշակերտներն ավելի լավ սովորեն:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ժամկետը	Կատարողներ
1.	Աշակերտների հանդիսավոր ընդունելություն: Դասագրքերի բաշխում: Ծնողական ժողովի հրավիրում: Ծնողխորհրդի ընտրություն	սեպտեմբեր	դասվար ծնող
2.	Դասավանդող ուսուցիչներին իրազեկել դասարանի բարոյահոգեբանական վիճակի մասին	սեպտեմբեր	դասվար
3.	Զրույց- քննարկում՝ Անկախության տոնի կապակցությամբ	սեպտեմբեր	դասվար,աշակերտ
4.	Տեղեկացնել առողջական, հոգեբանական, վարքային խնդիրներ ունեցող աշակերտների մասին:Համագործակցել և կատարել դասալսումներ	սեպտեմբեր	դասվար, ծնող
5.	Համագործակցել դպրոցի լոգոպեդի, հոգեբանի, սոցմանկավարժի հետ	ուստարվա ընթացքում	դասվար,դասավանդող ուսուցիչներ
6.	Ա հնչյուն –տառի շնորհանդես:	հոկտեմբեր	դասվար
7.	Զրույց ,,Իմ քաղաքամայր Երևանը,, թեմայով	հոկտեմբեր	դասվար
8.	Զրույց <<Ովքե՞ր են մեր ընկերները, ինչպե՞ս ենք շփվում>>: Ընկերասիրության մասին պատմվածքների ընթերցում:	հոկտեմբեր	դասվար

9.	Ինչպես խուսափել դժբախտ պատահարներից /գազ, ջուր, էլեկտրաէներգիա, հրազեն, ավտովթար/	Ուստարվա ընթացքում	դասվար
10.	Ծանոթացում դպրոցի տարհանման պլանին	նոյեմբեր	դասվար
11.	Զրույց <<Դպրոցը մեր տունն է,սովորենք իրար հարգել ու հասկանալ>> թեմայով	նոյեմբեր	դասվար
12.	,,Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները,,	նոյեմբեր	աշակերտ,դասվար
13.	Երթևեկության կանոնների հիշեցում, ծանոթացում, քարտային աշխատանք։ Էլեկտրոնային դաս	նոյեմբեր	դասվար,աշակերտ
14.	Երեխաների իրավունքների պաշտպանության օր։ Դասարանական կանոնների վերանայում։	դեկտեմբեր	դասվար
15.	Ամանորյա լույսեր։ Էլեկտրոնային դաս-ցուցադրում ,,Ինչպես են նշում Նոր տարին այլ երկրներում։	դեկտեմբեր	դասվար
16.	I կիսամյակի ամփոփում , II կիսամյակում կատարվելիք աշխատանքների քննարկում	դեկտեմբեր	դասվար,ծնող
17.	Բանակի օր։ Հայրենասիրության դաս՝ 44-օրյա պատերազմում հերոսացած քաջերի մասին։ Ես խաղաղություն եմ ուզում։	հունվար	դասվար
18.	Զրույց և մեկնաբանություններ։ Մեր պետականության խորհրդանիշները՝ զինանշան, դրոշ,օրհներգ	հունվար	դասվար աշակերտ
19.	Գիրք նվիրելու օր։ Թումանյանի հեքիաթների ընթերցում, նկարազարդում և քննարկում	փետրվար	դասվար,աշակերտ գրադարանավար

20.	Մայրենիի օր։ <<Հայոց լեզուն հազարագանձ>>	փետրվար	դասվար
21.	Էքսկուրսիա՝ Թումանյանի անվան տիկնիկային թատրոն	փետրվար	դասվար

22.	Մայրության և գեղեցկության տոն	մարտ	դասվար
23.	Գարունը, բնության փոփոխությունները և գարնանային տոները։ Ապլիկացիա	մարտ	դասվար
24.	Վարվեցողության կանոններ։ Խաղ՝<<Ո՞ր դեպքում է ավելի բարեկիրթ վարվում տվյալ անձը>> թեմայով։	մարտ	դասվար
25.	Զատկի տոն՝(զրույց, խաղեր՝ նվիրված այդ տոնակատարությանը)	ապրիլ	դասվար
26.	<<Հրաժեշտ Այբբենարանին>> միջոցառում։ Էքսկուրսիա Օշական	ապրիլ	դասվար
27.	Խաղը երեխաների կյանքում։ Ինչպիսի՞ խաղեր են սիրում	ապրիլ	դասվար
28.	Ընտանիքի միջազգային օր։ Էքսկուրսիա Խնկո -Ապոր գրադարան	մայիս	դասվար,ծնողներ
29.	Զրույց-քննարկում՝ <<Ի՞նչ տվեց ինձ այս ուսումնական տարին >> թեմայով	մայիս	դասվար
30.	Ուստարվա աշխատանքների ամփոփում։ Ծնողական ժողով։	մայիս	դասվար,ծնողներ

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ

Անցկացման օրը	Դասղեկի կողմից անցկացվող միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	Ծանոթություն
սեպտեմբեր	Սեպտեմբերի 1՝<< Գիտելիքի օր>> համադպրոցական միջոցառում	
Սեպտեմբեր	Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում	
Հոկտեմբեր	Կիրթ վարվելաձև (բարեկրթություն)	
Հոկտեմբեր	Զրույց Իմ քաղաքի ծնունդը՝ Էրեբունի- Երևան	
Նոյեմբեր	Միջոցառում նվիրված Ա տառին։Էլեկտրոնային դաս	
Նոյեմբեր	Հեքիաթների ընթերցում, դիտում և քննարկում	
Դեկտեմբեր	Երթևեկության կանոնների հիշեցում, դրանց կիրառումը՝ լուսացույց։Էլեկտրոնային դաս	
Դեկտեմբեր	Զրույց և քննարկում երկրաշարժի և այլ բնական աղետների վերաբերյալ	
Դեկտեմբեր	Ամանորի պատմությունը։ Քանի՞ Նոր տարի են ունեցել հայերը և ինչպե՞ս են նշում Ամանորը աշխարհի տարբեր երկրներում։ Ներկայացման դիտում	

Հունվար	Էքսկուրսիա՝ Թումանյանի անվան տիկնիկային թատրոն ներկայացում դիտելու	
Հունվար	Մեր ժամանակի հերոսները։	

Փետրվար	Գրքի նվիրատվություն՝ գրադարանին և ընկերներին։	
Փետրվար 21□02□23	Մայրենիի տոն ,,Հայոց լեզուն հազարագանձ,,	
Մար տ	Մայրության և գեղեցկության տոն։	
Մարտ	Զրույց՝Առողջ ապրելակերպ	
Ապրիլ	Էքսկուրսիա Խնկո -Ապոր գրադարան	
Ապրիլ	Միջոցառում՝ <<Հրաժեշտ Այբբենարանին>>	
Մայիս	Էքսկուրսիա Օշական	
Մայիս	Ուսումնական տարվա դաստիարակչական աշխատանքների ամփոփում :	